ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 սեպտեմբերի 2024 թվականի N 1122-Ա

ԱՆԱՆԻԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավար Ղազար Ղազարյանս ուսումնասիրելով Անանիա Մանուկյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի նյութերը պարզեցի՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի կողմից Անանիա Մանուկյանի /հասցե՝ ՀՀ, Շիրակ, Գյումրի Վ. Սարգսյան 1թաղ. 89տ/ նկատմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1–ին մասի «բ» ենթակետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ, քանի որ քաղաքացու կողմից ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրառատ գյուղի վարչական տարածքում գտնվող 04–085-0065-0023 կադաստրային ծածկագրով հողամասը օգտագործվում է ոչ նպատակային նշանակությամբ, այն է իրականացվում է ձկնաբուծություն:

Անձի կողմից իրականացվել է ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 54–րդ հոդվածի 1–ին և 2–րդ պարբերություններով սահմանված խախտումներ, որոնք առաջացնում են տուգանքի նշանակումներ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի և հինսապատիկի չափերով:

Վարույթի հարուցման համար հիմք էր հանդիսացել ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի կողմից 2023 թվականի հունվարի 9-ի N 4-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից 2024 թվականի օգոստոսի 28-ին կազմված արձանագրությունը: Արաքս համայնքի ղեկավարի 2024 սեպտեմբերի 5–ի N 2217 գրությամբ Անանիա Մանուկյանը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի համաձայն՝ պատշաճ ծանուցվել էր վարչական վարույթի հարուցման, անցկացման վայրի և ժամանակի մասին / Ծանուցման հիմք՝ գրության մեկ օրինակի վրա 2024 թվականի սեպտեմբերի 16-ին արված գրառումը և ստորագրությունը/:

Անանիա Մանուկյանը ներկայացել է 2024 թվականի սեպտեմբերի 16-ին անցկացվող վարչական վարույթի լսմանը: Լսման ընթացքում պարզ դարձավ, որ Անանի Մանուկայի կողմից վերը նշված՝ հողամասում դադարեցված է ձկնաբուծությունը:Անանիա Մանուկյանի կողմից համայնքապետարան է ներկայացվել

համապատասխան լուսանկարներ և պարզաբանում,: Այսպիսով ներկայացրեց հողամասի վկայականը որտեղ նշված էր՝ նպատակայնին նշանակությունը բնակավայրերի՝ գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման և նշեց որ դիմել է համապատասխան կադաստրի կոմիտե որպիսի հողամասի գործառնական նշանակությունը՝ փոխեն արդյունաբերության նշանակության կից՝ ներկայացվում է ձեռագիր պառզաբանում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1–ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2–րդ մասի «ա» ենթակետով, հիմք ընդունելով Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի երկրորդ կարգի մասնագետի կողմից 2024 թվականի սեպտեմբերի 19–ին ներկայացված զեկուցագիրը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Անանիա Մանուկյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը կարճել:

2. Վարչական վարույթը կարճելու մասին որոշումը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշոփվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից՝ համայնքապետարանի տեղեկագրերում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2024թ. սեպտեմբերի 20
Արաքս համայնք